

## ԿՐՈՆԱԿԱՆ

ՀՅՈՒՅՑՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՆՐԸ ՀԵՏԵԿԸՆՔՆԵՐԸ ԵՒ ԶԳԵՇՑՈՒԹԻՒՆ՝  
ՈՐՊԵՍ ՇԻԵՑՅՈՒՅՆԵԿԸ ՊԵՀԸՆՁ

Մի արքենայք գինւով, յորում զեղսութիւն է. այլ մանաւանդ լցարուք հոգւով սրբով:

Առ Եփեսացիս Ե.—18.

Լաւ է ոչ ուտել միտ և ոչ ըմպել գինի.  
և ոչ որով եղացը քո գայթակղի, կամ  
գթէ, կամ տկարանայ:

Առ Հռովմայեցիս ԺԴ.—21.

Ոչ ես արքից յայսմհետէ ի բերոյ որթոյ,  
մինչև ցօրն ցայն, յորժամ արքից զդա ընդ  
ձեզ նոր յարքայութեան Հօր իմոյ:

Մատքես ԻԶ.—29.

**Պ**եռ փոքր հասակիցս յիշում եմ, ինչպէս էին  
արդարանում գիւղացիք գինի խմելիս. «բա ինչից պիտի  
երևայ մեր քրիստոնէութիւնը, գինի խմեցէք, մենք հօ  
թուրք չենք, քրիստոնեան գինի պէտք է խմի, գինին  
Քրիստոսի արիւն է», ասում էին նրանք և առաջ բերում  
գինով լիքը ահագին կաւէ ամաններ և դատարկում ամենա  
այն եռանդով. և այս տեսակ քրիստոնէութիւնը նրանք  
աւանդում էին և այժմս էլ աւանդում են իրենց զաւակ-  
ներին և մերձաւորներին. Այս համոզմունքն ունին հո-  
գեորական և աշխարհական անձինքն առհասարակ. ես ճա-  
նաչում են բազմաթիւ քահանայութիւնից, եթէ քրիստոնեանե-  
րին գինի խմելն արգելուած լինէր. ի՞նչպէս են ներգոր-

ծում դինին և առհասարակ բոլոր հարբեցնող խմիչքները  
մարդուս մտաւոր և բարոյական կեանքի վրայ, ինչ աղ-  
դեցութիւն և հետեանք ունին մեր տնտեսական բարեկե-  
ցութեան համար, որքան կարեոր է դինին գործածութեան  
թեան համար, որ հասակից են սկսում մարդիկ հարբե-  
նալ որ և է խմիչքով։ Ահա մի շարք հարցեր, որոնց կ'աշ-  
խատենք պատասխանել համառօտակի և ապա կանցնենք  
բուն նպատակին։ Գիտնականորէն ապացուցուած է և փոր-  
ձով էլ գիտենք, որ հարբեցնող խմիչքները նախ գրդռում  
են մեր ջղերը և ապա թուլացնում, իսկ նեարդային հա-  
մակարդութիւնը, որպէս գիւրազգաց մասը մեր մարմի,  
զարմանալի շուտ թմրում ու թուլանում է։ Հարբած  
մարդը գիտենք, որ ոչ մի լուրջ և պարզ գիտակցական  
գործի պէտքական և ընդունակ չէ. նա այդ միջոցին իրեն  
ազատ է զգում ներքին քննադատից՝ խղճից և գործում  
է առաւել շուտ որպէս անասուն, քան գիտակից մի մարդ։  
Աստուծոյ պատկերավոր Գինու և առհասարակ բոլոր հար-  
բեցնող նխթերի գործածութիւնը սկսում է գլխաւորա-  
պէս պատանեկութիւնից երիտասարդութեան անցնելու  
շրջանից, երբ առանձին ոյժ են ստանում մարդկային  
որոշ կրքերը և կամքն անզօր է յաղթանակել նրանց դէմ  
խղճի պահանջների համեմատ։ «Մի լաւ դցեցինք և վրայ  
տուինք» ասում են սովորաբար մեր երիտասարդները և  
իրաւ վրայ տալու համար պէտք է կոնծել. յանցանք,  
ոճիր գործելու համար պէտք է թմրեցնել այն ճանա-  
պարհը, որով մեղ առաջնորդում է խղճի ձայնը, պէտք  
է թմրեցնել խիղճը. և մենք իրաւ այդ բոլոր դէպըե-  
րում կոնծում ենք։ Վերցրէք յանցանքի ամենափոքր  
տեսակից սկսած մինչեւ մարդասպանութիւնը և քննե-  
ցէք, թէ այդ բոլորը կատարելու համար մարդիկ ինչ են  
արել և գուք կը համոզուիք, որ կամ հարբած են եղել  
և կատարել են անդիտակցաբար և կամ յանցագործու-  
թիւնից առաջ հարբել են անդիտակից դառնալու՝ կամ,  
որ աւելի ուղղղն է, խղճի խայթից ազատուելու համար։  
Հարցրէք երիտասարդից, թէ նա ինչպէս ընկաւ և սովու-

րեց անտուակութեան և անտուակոցների ճանապարհը, երբ դադարեց գիմացի մարդկանց մարդ ընդունելուց, հաւկառակ սեռի ներկայացուցիչներն երբ են դադարում իրար մաքուր, եզրայրական և հարազատների աշքով ու զգացմամբ նայելուց, երբ կոնծում են, հարբում, անմըստանում։ Երբ է մարդս գողութեան սօվորում։ Հարբաժամանակ, ի՞նչ են անում պատերազմից առաջ, որ հակառակ բանակների զինուարները լաւ կռուեն, իրար լաւ կռուորեն, արիւնից չը խրտնեն։ Այս բոլորն անել տալու համար նրանց հարբեցնում են, սպանում նրանց խիղճը։ Հարբեցնող միջոցները մեր ժամանակում շատ շատ են.— դինին և օդին իրենց հարիւրաւոր տեսակներով, ծխախոտը, խաշխաշը կամ՝ ափիօնը, հաշիշը և այլն, բոլորն էլ հարբեցնող միջոցներեն և դործ են դրւում նոյն նպատակաւ՝ ոչ թէ առօղջութեան, ոչ թէ մնունդ ստանալու. ոչ, այլ խղճի հետ չը խօսակցելու. հաշիւ չը տեսնելու և այն թմրեցնելու համար ինձ կասեն, որ սխալ է եզրակացութիւններս կամ՝ շափազանցացրած։ Ո՞չ, ես երբէք համաձայն չեմ այդ բանում և պնդում եմ. որ բացի ժառանգական յանցաւորներից, որոնք դարձեալ կամ ալկօդոլիկների՝ (հարբեցողների) զաւակներեն և կամ դանդով ու դէմքով դեռ ևս այս կամ այն կենդանու նմանութիւնից շազատուած, գիմադերով և դագաթով իսկ յանցաւորի տիպարին պատկանող, մնացած բոլոր յանցաւորները հարբեցող են, խմող ձիշտ է նրանք փողոցներում չեն թափւում հարբեցութիւնից, նրանք չեն երերւում և տատանւում քայլելիս, բայց հարբեցութեան այդ ծայրահեղ վիճակն այլ ևս համարեա անվտանգ է, իսկ դրանից թպյլ, բայց գրգռուած և ոգեսրուած վիճակն է ոճարագործութեան և գողութեան համար, խղճին հակասելու և ստելու, կեղծելու համար անհրաժեշտ կացութիւնը։ Ահա այդ տեսակ տրամադրութիւն ունենալու համար է, որ կոնծում է հոգեսրականը, որպէս զի չըզգայ իւր գործի և դաւանանքի տարբերութիւնը, չընկատի կեղծիքի և ճշմարտութեան միջի հսկայական վիճի, ծխի և գործի

մէջ եղած ահագին անդունդը՝ կոնծում է ուսանողն ու ուսուցիչը, որպէս զի մէկը կարողանայ փակուել ճշմարտութեան հակառակ ստեղծուած շրջանակում և դասաւանդել անողեաք և անօդուա, բոլորին և բոլորավին անկարեսը բաներ՝ թողած կարեսները, իսկ միւսը, որպէս զի լսել կարողանայ այդ աւելորդաբանութիւնները կամ բոլորավին չըլսի, բայց արդարացնի իւր գեղեցիկ իդէալի և սիրուն գաղափարների դէմ վարած կեանքն ու կենցաղափարութիւնը կոնծում է դատաւորը, օրէնսդիրը, որպէս զի մինը կարողանայ խմբագրել խղճի հակառակ օրէնքներ, իսկ միւսը հնարաւորութիւն ունենայ գործադրելու այն կամայականորէն, անարդարացի և կամ նոյն տեսակ վարմունքը չընկատելու կոնծում է պաշտօնեան, գանձարանի տնօրէնն ու վերակացուն, որպէս զի հնար եղածին չափ շուտ շուտ յիշի իւր գրանը և կողապտել ու գողանակ կարողանայ, նոյն ձեռվ հարբում է ոստիկանը յանցաւորին գործակցելու և պաշտպանելու համար, գիւղի տանուտէրը, գատաւորը, զաւոդչին, միւրաբը, վաշխառուն, երբ նրանք անարդարութիւն են ուղում գործել և գործած յանցանքները չընկատել.

Այս բոլորից յետոյ, կարծեմ գժուար չէ որոշել, թէ որտեղից է մեր ժամանակի անհաւասարութիւնն ու անարդարութիւններ, աղքատութիւնն ու հիւանդութիւնները, և ինչպէս է, որ մարդիկ այդ բոլորը տեսնելով և հասկանալով հանդերձ, տասնեակ տարիներ լուսմ են, հաշտում և չեն աշխատում կեանքը խղճի պահանջներին յարմարացնելու, նրանց հետ հաշտեցնելու համար՝ իւր բոլոր արտայայտութիւններով։ Պատճառը կարծեմ պարզ է. քանի որ ծաղկում են զինեաներն և օղեաները, քանի որ ահագին քանակութեամբ տարածւում է անարդել ափիօնն ու ծխախոտը, գարեջուրն ու հաշիշը՝ երբէք ցանկալի համերաշխութիւն, արդարութիւն, խաղաղութիւն և եղբայրութիւն չենք ունենալ։ Ատրապատականում ինձ միքան սաստիկ զարմացնում էր։ Մինչդեռ այնտեղի թուրքերն ու պարսիկները շատ աւելի տղէտ են, քան մենք

և Կովկասի թուրքերն ու պարսիկները, մինչդեռ այնտեղ ոչ կանոնաւոր սոտիկանութիւն կայ, ոչ սորամնիկ և ոչ հսկող զօրք, և աւելի մեծ աղքատութիւն, այնու ամենայնիւ յանցագործութիւնը  $90\%$  աւելի քիչ է՝ քան Կովկաս սում, որտեղ ամենեքեան կոնծում են և ծխում։ Այնուղել նվազ է կաշառակեր, անարդար, զրկող և կոռարար, նրանք, որոնք գողունի հարբում են. (Հարբած պարսիկները փախում են փողոց գուրս գալ, որովհետեւ խկոյն բռնում և խիստ պատժում են, բացառութիւն են կազմում զլիաւորապէս պաշտօնեաները), ինձ ցաւ էր տեսնել, թէ ինչպէս հարբեցութեան չնորհիւ հայ հայրենասէրներից շատերը շատ անգամ գառնում էին մարդասովան և յանցաւոր և չեին գարշում սարփարաստների կամ տաճկաց էֆենդիների մօտ իրեւ ֆառաջ կամ աւելի ստոր պաշտօնով ծառայելուց և ամենահասարակ պատճառներով մարդ էին սպանում, կանանց արևանգում կամ կողոպտում ու կտոր կտոր անում, եւ այդ մարդիկ բոլորն էլ խմում ու ծխում էին, բոլորն էլ հարբում. իսկ զգաստները երբէք այդպէս չեն ընկել, երբէք չեն արատաւորել իրենց անունն ու գործը։ Այս այսպէս լինելուց յետոյ, ինչպէս պատահեց, որ Քրիստոսը թոյլատրեց գինու գործածութիւնը, որ նա իւր հետեւղներին թոյլատրեց գինի խմելը։

Յովհաննէս Աւետարանչի տեսիլքի մէջ հետեւալ պարբերութիւնը պարզ ցոյց է տալիս, թէ ի՞նչ հետեւանք ունէր հարբեցութիւնը և ինչպէս էին նայում նրա վրայ։ Այլ հրեշտակ երկրորդ գոյր զհետ նորա և ասէր, անկաւ, անկաւ Բարիլոն մեծն ի գինւոյ արբեցութենէ, ի ցասմանէ, ի պոռնկութեննէ իւրմէ, որ արբեցոյց զամենայն հեթանոսան։ Նոյն մտքով բազմաթիւ պարբերութիւններ կան հին կտակարանում։ Հարբեցութեամբ և շնութեամբ զայրացրին մարդիկ Աստուծուն և ջրհեղեղի պատժի հասան ըստ Աստուծաշնչի։ Նոր կտակարանից էլ մենք պարզ տեսնում ենք, որ գինին և օղին երբեւ խմիչք արգելուած էր գեռ առաքեալներից սկսած

և Պօղոս առաքեալը Եփեսացւոց գրքի Ե դլխի 18-ր պարբերութեան մէջ ասում է. —

«Մի արբենայք գինով, յօրում զեղխութիւն է, այլ մանաւանդ լցարուք հողւով», իսկ Տիտոսի գրքի մէջ պատուիրում է «զգաստութեամբ, արդարութեամբ և աստուածաշտութեամբ ասրել աշխարհում»։ Տիմոթէոսին նոյն Պօղոս առաքեալը մի միայն հիւ անդութեան պատճառով է թոյլատրում ջրի հետ գինի խառնել և իրեւ գեղ գործածել. «Այսուհետեւ մի ջուր և եթ ըմպիցեա, այլ սակաւիկ մի գինի խառնեսջիր վասն ստամբուի և ստէպ հիւանդութեանց»։ Առ Տիմոթէոս Ե—23, իսկ Հռովմայեցւոց թղթի (ԺԴ—21.) մէջ խորհուրդ է տալիս և ասում. Լաւ է միս չուտել և գինի չը խմել և ոչ այնպիսի բան անել, որով քո եղբայրը գայթակղում է, սայդաքում և տկարանում։

Յօվհաննէս Մկրտչի մասին եղած մարդարէութեան մէջ ասուած է. «Ես եղիցի մեծ առաջի Տետան և գինի և օղի մի արբցէ և հոգով որով լցցի անդստին յօրովայնէ մօր իւրոյց»։

Երկու գէովք ունինք Աւետարանի մէջ, որով գինեսոէրներն իրենց արդարացնում են և պնդում, որ քրիստոնեաներին գինու գործածութիւնը թոյլատրուած է, մինը Գալիլիայի Կանա քաղաքի հարսանիքն է, որուեղ Փրկիչը ջուրը գինու փոխեց և միւսը խորհրդաւոր ընթրիքը։ Աւկայն այդ երկու գէովքերից ոչ մինը չի ասում, որ գինին որպէս խմիչք թոյլատրած լինի Փրկիչը իւր հետեւ սպններին։ Նախ Կանա քաղաքի հարսանիքում Նա ջուրը փոխեց գինու, որը ալիօհօլ ունենալ չէր կարող և հետեւ սպէս պէտք է զուրկ լինէր հարբեցնելու ոյժից և երկրորդ՝ խորհրդաւոր ընթրեաց ժամանակ գինին յայտարարեց Իրեն արիւն և առհմանելով հաղորդութեան խորհուրդը, հենց այդ ձեռք արդելեց գործածել այն որպէս սովորական ըմպելիք։ «Ոչ ես արքից յայտնեամէ ի ըներդոյ որթոյ մինչև ցօրն ցային, յորժամ արքից զգա ընդ ձեղ յարբայութեան Հօր իւրոյց»։ (Մատթ. իշ.—29) Արդեօք

Հենց վերջին պարբերութիւնը պերճախօս առացոյց է, որ գինի խմելն արգելուեց հենց Փրկչից և առաքեալներն իրենց կողմից պահեցին այդ արգելքն ամենայն սրբութեամբ Կորնմացւոց ա, թղթի ժե գլխի մէջ (32 և 33) Պօզոս առաքեալը դիմելով հաւատացեալներին, յորդուրում է, «Եթէ ձեզ ասեն՝ ուտենք, խմենք, սրավհետեւ վաղը մեռնելու ենք, մի խարուիք, որովհետեւ բարի և քաղցր բարբերը չար բարբերից ապականւում ենա Եթէ այս բոլորին աւելացնենք նաև առաքելական երկրորդ կանոններից 54-դ յօդուածը, կը տեսնենք, որ գինի խմելը հաւատացեալ քրիստոնեաներին բօլորովին արգելուած էր Ահա այդ կանոնը,—«Եթէ ժառանգաւորներից մէկը գիշեանում բռնուի, թող մերժուի եկեղեցուց, ճանապարհ գնալիս մի միայն կարող են հանգստանալ պահպոկում»; Ժամանակի ընթացքում տարաբազդ արար գինիներ ընտրեալի նրբաճաշակ և հմուտ հանգիսացան և հանգիսանում են ժառանգաւորները և շատ անդամ արքեցութեան կարսպետ և խրախուսող նրանք են լինում»:

Յաւելով պէտք է ասենք, որ գինին, օղին և ծխախոտը սկսել են տարածուել և աւեր սփռել մեր գիւղերում և որքան մեծ ծաւալ է ստանում նրանց գործածութիւնը, այնքան թուլանում է ընտանեկան կապը, ընկենում մեր ժողովրդի անչափ գովուած բարոյականութիւնը, քաղմանում՝ ոճրագործութիւնն ու աւագակութիւնը և սկսում է թագաւորել ընդհանուր ազգաստութիւն։ Ի՞նչ կառկած, որ այսպիսի պայմաններում ընկնում է հաւատը, կաղմալուծում եկեղեցին և մարդիկ հետզհետէ հեռանում ու խորթանում են Աւետարանից։

Ո՞չ Աւետարանը միանգամայն արգելում է հարրեցութիւնը և դգաստ սիրտ և հոգի է պահանջում հաւատացեալներից։ Առանց դգաստութեան նրա սերմերը ժայռի, մշկերի և ճանապարհի վրայ են ընկնում և սցնանում անպառեզ, և մենք պարուառ ենք ազգովին կռի յայտարարել արքեցուցիչ բոլոր խմիչքների և ծխախուի գէմ։ Մեզ ըմուկին պէտք է հոգեոր լինիք մենք պէտք է

խմենք այն հոգեւոր վիճից, որը մեզ հետ շրջում է և է ինքն Քրիստոս, ինչպէս այդ տեղի ուներ առաքելոց ժամանակ։ (Կորնթ. ա. Գլ. Ժ—4.) Մեր գործն ու աշխախատանքը նախ պէտք է ուղղուած լինի այն խոչնդռաների դէմ, որոնք մեզ զրկում են մարդկանց արթուն խղճի հետ գործ ունենալուց, որոնք սոսկալի արգելք են դառնում Աստուծոյ արդարութիւնն ու ձայնը մարդկանց սրտի մէջ սերմանելու և արդիւնաւորելու գործին։ Եւ ինչպէս որ և է բան գրելու համար բացի գրչից և թանաքից հարկաւոր է մաքուր թուղթ, այնպէս էլ Աստուծոյ Բանն ու արքայութիւնը գրելու և մարմնացնելու համար՝ հարկաւոր է զգաստ ուղեղ և արթուն՝ ոչ մի բանով չը թմրեցրած խիղճ։ Այդ էր պահանջում Փրկիչն իւր բոլոր հետեղներից, այդ էր որոնում, այդ էր ցանկանում ասել, երբ կրկնում էր, որ եթէ մանկան նման չդառնանք, չենք կարող Աստուծոյ արքայութիւնը ժառանգել։ Ո՛չ, ոչ թէ ժառանգել, այլ և հասկանալ և ըմբռնել՝ կասենք մենք։

Ե. Տ. Վ. Մ.

## Մ Ա Ց Բ Ա Թ Ո Ւ

Փետրվարի 25-ին Թիֆլիզից Սուրբ էջմիածին վերադարձաւ ազգիս Վեհափառ Հայրապետը։ Նորին սրբութեան ուղեկցում էին Յուսիկ և Կորիւն վարդապետները։ Կայարան ընդառաջ էր եկել Վանական կառավարութեան նախագահ Եղիշէ ծ. վարդապետ Մուրադեանը։ Նորին Սրբութիւնը բարեհաճեց օթեանել ս. Հռիփսիմէի մօտ հանգուցեալ Երեմիա եպիսկոպոսի շինած բնակարանում։ Մարտի 3-ին Վեհափառը մեկնեց Երևան, ուր առաջուց ուղարկել էր Սինոդի անդամ գերապատիւ Յովհաննէս